

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը. Եվա Գրիգորյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության մասնագետ

Գործուղման վայրը և ժամկետները. ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն),

3. Հրավիրող կողմը. Արժույթի Միջազգային Հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Պետական հատվածի պարտքի վիճակագրություն–Հիմնարար (PSDS-fundamental)» թեմայով սեմինարին: Գործուղման նպատակն էր Արժույթի Միջազգային կողմից ներկայացվող պետական կառավածի պարտքի վիճակագրության հիմնարար սկզբունքներին, դասակարգումներին ծանոթանալը:

Քննարկված թեմաները.

- ✓ PSDS-ի նպատակներ և սկզբունքներ,
- ✓ Տվյալների տարածման և հավաքագրման կարևորություն,
- ✓ Պարտքի հասկացություններ (ֆինանսական ակտիվներ/պարտավորություններ, համախառն պարտք և մաքուր պարտք), պարտքային գործիքների ճանաչում և դասակարգում, պայմանական պարտավորություններ,
- ✓ Պետական հատվածի պարտքի ինստիտուցիոնալ ծածկույթ, պետական հատվածի պարտքի սահմանազատում,
- ✓ Պետական պարտքի գնահատման և գրամնցման մեթոդներ,
- ✓ Պետական հատվածի պարտքի վիճակագրության համախմբում,
- ✓ Կառավարության ֆինանսների վիճակագրության և պետական հատվածի պարտքի վիճակագրության միջև կապ,
- ✓ Կառավարության ֆինանսների վիճակագրության ոլորտի վերջին թարմացումներ

✓ ԱՄՀ-ի Տվյալների Որակի Գնահատման Չափորոշիչ (DQAF), կիրառություն
Պետական հատվածի պարտքի վիճակագրության նկատմամբ :

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին ներկա են գտնվել 16 երկրների 26 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի, տեխնիկական վարժություններ կատարելու ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Մասնակիցները բաժանվել են 3 խմբերի, որոնց առաջադրվել են հանրային հատվածի պարտքի վիճակագրության և կառավարության ֆինանսների վիճակագրության համախմբման, ոլորտային դասակարգումների տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի շրջանակներում կարևորվեցին պետական ֆինանսների վիճակագրության պատասխանատուների հստակ շրջանակի սահմանելը, համապատասխան ինֆորմացիայի փոխանցելիության անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա բարձրացնել վիճակագրության որակը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը



ԵՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

11 օգոստոսի, 2025թ.